ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 23 » դեկտեմբերի 2022թ. №63-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով, 64-րդ հոդվածի 1-ին մասով՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել՝ Լոռի Բերդ համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 23-ի առաջին նստաշրջանի հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Ներսիսյան Արայիկ Մենժիկի			
Վարդումյան Հայկ Վազգենի			
Շահնազարյան Թամարա Էդիկի			
Պապյան Հարություն Միշիկի			
Ներսեսյան Իրինա Վազգենի			
Չիբուխչյան Արման Հրաչիկի			
Սիմոնյան Անահիտ Բաբկենի			
Պապիկյան Վահրամ Ռոմիկի			
Մարգարյան Սիլվա Ստեփանի			
Վերմիշյան Կարլեն Ջիվանի			
Չատինյան Վանո Վալերի			
Գրիգորյան Աննա Հրայրի			
Չատինյան Արթուր Հրաչիկի			
Ասրյան Աննա Տիգրանի			

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ.
2022թ. դեկտեմբերի 23
գ. Լոռի Բերդ

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու

2022թ. դեկտեմբերի 23-ի №63-Ա որոշման

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 23-ի առաջին նստաշրջանի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմերում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմը հաստատելու մասին:

3) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու մասին:

4) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը և հիմնական միջոցները մրցութային կարգով վարձակալության տրամադրելու համար հանձնաժողով ստեղծելու մասին:

5) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի մշտական հանձնաժողովների կազմը հաստատելու մասին:

6) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ղեկավարի կողմից կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացման նպատակով դիմումների քննարկման հանձնաժողով ստեղծելու մասին:

7) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի գույքագրման արդյունքները հաստատելու մասին:

8) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքում 2023 թվականի համար տեղական տուրքերի, վճարների տեսակները և դրույքաչափերը հաստատելու մասին:

9) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին:

10) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 23 » դեկտեմբերի 2022թ. №64-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասով՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմերում ընդգրկվող ավագանու անդամների թիվը սահմանել հինգ և հանձնաժողովների անհատական կազմերում ընդգրկել ավագանու հետևյալ անդամներին՝
   1) Ներսեսյան Իրինա Վազգենի
   2) Սիմոնյան Անահիտ Բաբկենի
   3) Պապիկյան Վահրամ Ռոմիկի
   4) Գրիգորյան Աննա Հրայրի
   5) Ասրյան Աննա Տիգրանի
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Ներսիսյան Արայիկ Մենժիկի			
Վարդումյան Հայկ Վազգենի			
Պապյան Հարություն Միշիկի			
Շահնազարյան Թամարա Էդիկի			
Ներսեսյան Իրինա Վազգենի			
Չիբուխչյան Արման Հրաչիկի			
Սիմոնյան Անահիտ Բաբկենի			
Պապիկյան Վահրամ Ռոմիկի			
Մարգարյան Սիլվա Ստեփանի			

Վերմիշյան Կարլեն Ջիվանի			
Չատինյան Վանո Վալերի			
Գրիգորյան Աննա Հրայրի			
Չատինյան Արթուր Հրաչիկի			
Ասրյան Աննա Տիգրանի			

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ.

2022թ. դեկտեմբերի 23

գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 23 » դեկտեմբերի 2022թ. №65-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և ՀՀ Կառավարության 2011թ. փետրվարի 24-ի թիվ 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 02.06.2016թ. թիվ 631-Ն որոշման պահանջներով, ինչպես նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասով՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով հետևյալ կազմով.

հանձնաժողովի նախագահ՝

1) Մկրտումյան Լիլիթ Ալֆրեդի – համայնքապետարանի սոցիալական աշխատող

հանձնաժողովի քարտուղար՝

2) Շահնազարյան Թամարա Էդիկի - ավագանու անդամ

հանձնաժողովի անդամներ՝

3) Մարգարյան Սիլվա Ստեփանի ավագանու անդամ.

4) Սերոբյան Անի Սամվելի - ավագանու անդամ

5)Մաթևոսյան Հասմիկ Գառնիկի–Ստեփանավանի ՄՄԾՏԿ-ի սոցիալական աշխատանքի և զբաղվածության բաժնի ավագ սոցիալական աշխատող

6) Մելիքսեթյան Նազելի Ռոմիկի - ՈԼՄՎ Ստեփանավանի բաժնի ԱԳ և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքի ավագ տեսուչ

7) Ղազարյան Անի Արամի - Լոռու մարզպետարանի Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի ավագ մասնագետ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Ներսիսյան Արայիկ Մենժիկի			
Վարդումյան Հայկ Վազգենի			
Պապյան Հարություն Միշիկի			
Շահնազարյան Թամարա Էդիկի			

Ներսեսյան Իրինա Վազգենի			
Չիբուխչյան Արման Հրաչիկի			
Սիմոնյան Անահիտ Բաբկենի			
Պապիկյան Վահրամ Ռոմիկի			
Մարգարյան Սիլվա Ստեփանի			
Վերմիշյան Կարլեն Ջիվանի			
Չատինյան Վանո Վալերի			
Գրիգորյան Աննա Հրայրի			
Չատինյան Արթուր Հրաչիկի			
Ասրյան Աննա Տիգրանի			

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ.

2022թ. դեկտեմբերի 23

գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 23 » դեկտեմբերի 2022թ. №66-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի առաջին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև հիմք ընդունելով Լոռի Բերդ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին որոշում է.

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը և հիմնական միջոցները մրցութային կարգով վարձակալության տրամադրելու համար ստեղծել հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Աճուրդի կազմակերպիչ և աճուրդավար - Լոռի Բերդ համայնքի ղեկավար՝ Արայիկ Ներսիսյան

Արձանագրող - Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Անի Մարտիրոսյան

Հանձնաժողովի անդամներ՝

համայնքապետարանի գլխավոր մասնագետ՝ Մարգարիտա Հովսեփյան

համայնքապետարանի առաջատար մասնագետ՝ Արփինե Ավետյան

ավագանու անդամ՝ Վարդումյան Հայկ Վազգենի

ավագանու անդամ՝ Պապյան Հարություն Միշիկի

ավագանու անդամ՝ Չատինյան Վանո Վալերի

ավագանու անդամ՝ Չատինյան Արթուր Հրաչիկի

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Ներսիսյան Արայիկ Մենժիկի			
Վարդումյան Հայկ Վազգենի			
Շահնազարյան Թամարա Էդիկի			

Պապյան Հարություն Միշիկի			
Ներսեսյան Իրինա Վազգենի			
Չիբուխչյան Արման Հրաչիկի			
Սիմոնյան Անահիտ Բաբկենի			
Պապիկյան Վահրամ Ռոմիկի			
Մարգարյան Սիլվա Ստեփանի			
Վերմիշյան Կարլեն Ջիվանի			
Չատինյան Վանո Վալերի			
Գրիգորյան Աննա Հրայրի			
Չատինյան Արթուր Հրաչիկի			
Ասրյան Աննա Տիգրանի			

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ.

2022թ. դեկտեմբերի 23

գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 23 » դեկտեմբերի 2022թ. №67-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև հաշվի առնելով «Լոռի Բերդ համայնքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» 12.12.2022.թ թիվ 49-Ն որոշումը՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի մշտական հանձնաժողովների հետևյալ կազմերը.

1) Ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով

ավագանու անդամ՝ Շահնազարյան Թամարա Էդիկի

ավագանու անդամ՝ Չիբուխչյան Արման Հրաչիկի

ավագանու անդամ՝ Պապիկյան Վահրամ Ռոմիկի

ավագանու անդամ՝ Վերմիշյան Կարլեն Ջիվանի

ավագանու անդամ՝ Չատինյան Արթուր Հրաչիկի

2) Մշակույթի, կրթության, սպորտի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով

ավագանու անդամ՝ Վարդումյան Հայկ Վազգենի

ավագանու անդամ՝ Ներսեսյան Իրինա Վազգենի

ավագանու անդամ՝ Սիմոնյան Անահիտ Բաբկենի

ավագանու անդամ՝ Գրիգորյան Աննա Հրայրի

ավագանու անդամ՝ Ասրյան Աննա Տիգրանի

3) Իրավական, քաղաքաշինության, հողօգտագործման և գյուղատնտեսության հարցերի մշտական հանձնաժողով

Համայնքի ղեկավար, ավագանու անդամ՝ Արայիկ Մենժիկի Ներսիսյան

ավագանու անդամ՝ Պապյան Հարություն Միշիկի

ավագանու անդամ՝ Մարգարյան Սիլվա Ստեփանի

ավագանու անդամ՝ Վերմիշյան Կարլեն Ջիվանի

ավագանու անդամ՝ Ասրյան Աննա Տիգրանի

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	**Կողմ**	**Դեմ**	**Ձեռնպահ**
Ներսիսյան Արայիկ Մենժիկի			
Վարդումյան Հայկ Վազգենի			
Շահնազարյան Թամարա Էդիկի			
Պապյան Հարություն Միշիկի			
Ներսեսյան Իրինա Վազգենի			
Չիբուխչյան Արման Հրաչիկի			
Սիմոնյան Անահիտ Բաբկենի			
Պապիկյան Վահրամ Ռոմիկի			
Մարգարյան Սիլվա Ստեփանի			
Վերմիշյան Կարլեն Ջիվանի			
Չատինյան Վանո Վալերի			
Գրիգորյան Աննա Հրայրի			
Չատինյան Արթուր Հրաչիկի			
Ասրյան Աննա Տիգրանի			

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.տ.

2022թ. դեկտեմբերի 23

գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 23 » դեկտեմբերի 2022թ. №68-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ և 42-րդ կետերով և 77-րդ հոդվածի 3-րդ կետով՝

1 Լոռի Բերդ համայնքի գույքի կազմում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի գույքի սեփականության գույքագրման արդյունքները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Ներսիսյան Արայիկ Մենժիկի			
Վարդումյան Հայկ Վազգենի			
Շահնազարյան Թամարա Էդիկի			
Պապյան Հարություն Միշիկի			
Ներսեսյան Իրինա Վազգենի			
Չիբուխչյան Արման Հրաչիկի			
Սիմոնյան Անահիտ Բաբկենի			
Պապիկյան Վահրամ Ռոմիկի			
Մարգարյան Սիլվա Ստեփանի			
Վերմիշյան Կարլեն Ջիվանի			
Չատինյան Վանո Վալերի			
Գրիգորյան Աննա Հրայրի			
Չատինյան Արթուր Հրաչիկի			
Ասրյան Լենա Տիգրանի			

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.տ.

2022թ. դեկտեմբերի 23

գ. Լոռի Բերդ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու
2022թ. դեկտեմբերի 23-ի թիվ 63-Ա որոշման

Լոռի Բերդ համայնքի գույքացանկում ավելացնան ենթակա գույքի

Ց Ա Ն Կ

	Գույքի անվանումը	Չափի միավորը	Հաշվեկշ. արժեք /դրամ/	քանակ	Գումար /դրամ	Գույքի գտնվելու վայրը
1.	Էլեկտրական տաքացուցիչ՝ Ռեսենտա-ՕԿ-2500՝	հատ	1	51 000	51 000	Ագարակ
2.	Լուսատու հենասյունով 2021թ.կառուցված	հատ	25	126 000	3 150 000	Ագարակ
3.	Լուսատու հենասյունով 2021թ.կառուցված	հատ	9	126 000	1 134 000	Բովաձոր
4.	Էլեկտրական տաքացուցիչ՝Ռեսենտա-ՕԿ-2500՝	հատ	3	51 000	153 000	Լոռի Բերդ
5.	Լուսատու հենասյունով 2021թ.կառուցված	հատ	10	126 000	1 260 000	Կողես
6.	Լուսատու հենասյունով 2021թ.կառուցված	հատ	25	126 000	3 150 000	Ուռուտ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 23 » դեկտեմբերի 2022թ. №69-Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ, ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ, 19-րդ, 20-րդ կետերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ հոդվածներով, ինչպես նաև Աղբահանության և սանիտարական մաքրման մասին օրենքի 14-րդ հոդվածով՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքում 2023 թվականի համար տեղական տուրքերի, վճարների տեսակները և դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 01-ից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Ներսիսյան Արայիկ Մենժիկի			
Վարդումյան Հայկ Վազգենի			
Շահնազարյան Թամարա Էդիկի			
Պապյան Հարություն Միշիկի			
Ներսեսյան Իրինա Վազգենի			
Չիբուխչյան Արման Հրաչիկի			
Սիմոնյան Անահիտ Բաբկենի			
Պապիկյան Վահրամ Ռոմիկի			
Մարգարյան Սիլվա Ստեփանի			
Վերմիշյան Կարլեն Ջիվանի			

Չատինյան Վանո Վալերի			
Գրիգորյան Աննա Հրայրի			
Չատինյան Արթուր Հրաչիկի			
Ասրյան Աննա Տիգրանի			

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.տ.

2022թ. դեկտեմբերի 23

գ. Լոռի Բերդ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու
2022թ. դեկտեմբերի 23-ի №69-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ **տասնհինգ հազար դրամ**,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **երեսուն հազար դրամ.**

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հիսուն հազար դրամ**.

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հիսուն հազար դրամ**.

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հարյուր հազար դրամ**.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **երեք հազար դրամ**,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հինգ հազար** դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ **երեք հազար դրամ**.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ **հինգ հազար դրամ:**

4. համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **երկու հարյուր հազար դրամ.**

5. համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ

վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **երկու հարյուր հազար դրամ.**

6. համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **երկու հարյուր հազար դրամ.**

7. Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **վաթսուն հազար դրամ.**

8.Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հիսուն հազար դրամ.**

9. Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **մեկ հազար հինգ հարյուր դրամ**.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասնմեկ հազար դրամ,**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասնչորս հազար դրամ,**

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **քսանմեկ հազար դրամ,**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **քսանվեց հազար դրամ**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **քառասունվեց հազար դրամ:**

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **մեկ հազար հինգ հարյուր դրամ**.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասնմեկ հազար դրամ,**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասնչորս հազար դրամ,**

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **քսանմեկ հազար դրամ,**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **քսանվեց հազար դրամ.**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **քառասունվեց հազար դրամ:**

10. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ **երեք հարյուր հիսուն դրամ՝** մեկ քառակուսի մետրի համար:

11. համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ **հինգ հազար դրամ**,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **քսանհինգ հազար դրամ**,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ **երկու հարյուր հազար դրամ**,

դ. խաղատների համար՝ **հինգ հարյուր հազար դրամ**,
ե. շահումով խաղերի համար՝ **երկու հարյուր հիսուն հազար դրամ**,
զ. վիճակախաղերի համար՝ **հարյուր հազար դրամ**.

12.Համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երեք հազար դրամ,**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **վեց հազար դրամ,**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **տասնմեկ հազար դրամ,**

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **տասնվեց հազար դրամ,**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **քսանմեկ հազար դրամ,**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երեսունմեկ հազար դրամ,**

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **հինգ հարյուր դրամ,**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **մեկ հազար հինգ հարյուր դրամ,**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երեք հազար դրամ,**

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **հինգ հազար դրամ,**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **ինը հազար դրամ,**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **տասնվեց հազար դրամ,**

13. Ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **երկու հազար դրամ**,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **երեք հազար հինգ հարյուր դրամ,**

գ. սոցիալական գովազդի համար՝ **զրո դրամ**,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ **հազար հինգ հարյուր դրամ**.

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի **25% չափով**,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի **10% չափով**,

14. Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հարյուր հազար դրամ,**

15. Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ **տասը հազար դրամ,**

16. Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հինգ հարյուր հազար դրամ.**

17. Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,**

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **հինգ միլիոն դրամ,**

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **յոթ միլիոն դրամ,**

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **տասը միլիոն դրամ,**

18. համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ **օրացուցային տարվա համար հիսուն հազար դրամ,**

19. համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝

ա. «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.2-րդ հոդվածով սահմանված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների (բացառությամբ հեստապարային ակումբների) համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում տասը հազարից մինչև քսան հազար ՀՀ դրամ, իսկ Երևան քաղաքում՝ **երեսուն հազար դրամ**,

բ. հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում հարյուր հազարից մինչև երեք հարյուր հազար ՀՀ դրամ, իսկ Երևան քաղաքում՝ **երեք հարյուր հազար դրամ.**

20. համայնքի տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվության համար՝ **տասը հազար դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:**

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1. Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **տաս հազար դրամ**:

2. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով

փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **հինգ հազար դրամ:**

3. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **տաս հազար դրամ:**

4. Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **փաստասի կատարված ծախսերի չափով:**

5. Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար **հինգ հազար դրամ:**

6. համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **փաստասի կատարված ծախսերի չափով:**

7. Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է՝ ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ **ամսական հարյուր դրամ**

8. Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

1) առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ **մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հիսուն դրամ**.

2) հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ **մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ քսան դրամ.**

3) վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ **տասնհինգ դրամ**.

4) գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային,

քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ **մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ երեք դրամ.**

5) արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ **մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հինգ դրամ.**

6) շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր հատվածի համար՝ ըստ տվյալ հատվածում իրականացվող գործունեության տեսակի, համաձայն սույն կետի 1-5-րդ ենթակետերով սահմանված դրույքաչափերի, եթե աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին՝ կցելով նշված հատվածների մակերեսների նշումով սխեման, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն մասի 1-5-րդ կետերով սահմանված դրույքաչափով.

7) շինություններում (այդ թվում՝ առանձնացված տնտեսական գործունեության համար նախատեսված շինությունների առանձին հատվածներում), որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շինությունում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն կետի 1-5-րդ ենթակետերով սահմանված դրույքաչափով:

9. Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ **մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հիսուն դրամ:**

10. Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, կենցաղային ծառայությունների մատուցման վայրերում, որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին:

11. Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ սույն բաժնի 8-րդ կետի 1-5 ենթակետերով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանվում է՝ըստ ծավալի՝ **մեկ խորանարդ մետր աղբի համար՝ երեք հազար դրամ**:

12. Ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում, մասնավորապես ջրամատակարարման և

ջրահեռացման վճարներ՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով – **մեկ խորանարդ մետրի համար 50 դրամ**

13. Ջրմուղ-կոյուղու համար ջրամատակարարման և ջրահեռացման վճարներ՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար մեկ անձի համար՝ **վեց հարյուր դրամ:**

14. Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **երկու հազար դրամ:**

15.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ **մեկ հազար դրամ** փոխհատուցման վճար:

16.Համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճար հետևյալ դրույքաչափերով.

1) կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվության համար՝ **հինգ հարյուր դրամ.**

2) ծննդօգնության թեթև միջամտության համար՝ **մեկ հազար դրամ,** ծանր միջամտության համար՝ **հինգ հազար դրամ.**

3) վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից (բացառությամբ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների).

-մանր կենդանիների համար՝ **մեկ հարյուր դրամ.**

-խոշոր կենդանիների համար՝ **երկու հարյուր դրամ.**

4) կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքարի համար՝ **երկու հարյուր դրամ.**

5) ախտահանության մեկ քառ. մետրի համար՝ **երկու հարյուր դրամ.**

6) միջատազերծման (դեզինսեկցիա) մեկ քառ. մետրի համար՝ **մեկ հարյուր դրամ.**

7) կրծողների ոչնչացման (դեռատիզացիա) մեկ քառ. մետրի համար՝ **երկու հարյուր դրամ.**

8) արհեստական սերմնավորման համար՝ **հինգ հազար դրամ.**

9) կենդանու հերձման համար՝

-մանր կենդանիների ՝ **մեկ հազար դրամ.**

-խոշոր կենդանիների ՝ **երեք հազար դրամ.**

10) կենդանու բուժման համար՝ կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից ՝ յուրաքանչյուր այցելության համար՝ **մեկ հազար դրամից երկու հազար դրամ.**

11) կենդանիների նախասպանդային զննման համար՝

-մանր կենդանիների ՝ **մեկ հազար դրամ.**

-խոշոր կենդանիների ՝ **երկու հազար դրամ.**

12) կենդանիների հետսպանդային զննման համար՝

-մանր կենդանիների՝ **մեկ հազար դրամ.**
-խոշոր կենդանիների՝ **երկու հազար դրամ.**

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 23 » դեկտեմբերի 2022թ. №70-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով կազմել մշտական գործող հանձնաժողով հետևյալ կազմով.

1) Անի Պավլեի Մարտիրոսյան - համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար, հանձնաժողովի նախագահ

2)Արթուր Ռուդոլֆի Վարդանյան - համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ,

3) Լիլիթ Ալֆրեդի Մկրտումյան - համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ, հանձնաժողովի քարտուղար,

4) Թամարա Էդիկի Շահնազարյան - ավագանու անդամ

5) Սիլվա Ստեփանի Մարգարյան ավագանու անդամ

6) Արման Հրաչիկի Չիբուխչյան

7) Անի Սամվելի Սերոբյան

2. Հանձնաժողովին՝ ստացված դիմումները քննարկել դրանք համայնքապետարանի աշխատակազմ մուտքագրվելուց հետո 7-օրյա ժամկետում և հանձնաժողովի եզրակացությունը՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափի և անհրաժեշտության մասին ներկայացնել համայնքի ղեկավարին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Ներսիսյան Արայիկ Մենժիկի			

Վարդումյան Հայկ Վազգենի			
Շահնազարյան Թամարա Էդիկի			
Պապյան Հարություն Միշիկի			
Ներսեսյան Իրինա Վազգենի			
Չիբուխչյան Արման Հրաչիկի			
Սիմոնյան Անահիտ Բաբկենի			
Պապիկյան Վահրամ Ռոմիկի			
Մարգարյան Սիլվա Ստեփանի			
Վերմիշյան Կարլեն Ջիվանի			
Չատինյան Վանո Վալերի			
Գրիգորյան Աննա Հրայրի			
Չատինյան Արթուր Հրաչիկի			
Ասրյան Աննա Տիգրանի			

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ.

2022թ. դեկտեմբերի 23

գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 23 » դեկտեմբերի 2022թ. №71-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի դրույթներով՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2023 թվականի բյուջեն՝ համաձայն 1-5 հավելվածների:

2 .Հաստատել համայնքի 2023 թ. բյուջեի եկամուտները.
վարչական բյուջեի գծով - 244173,6 հազար դրամ
ֆոնդային բյուջեի գծով- 36360,0 հազար դրամ
ընդհանուր - 244173,6 հազար դրամ

3. Հաստատել համայնքի 2023 թ. բյուջեից հատկացումներն ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման.
վարչական բյուջեի գծով - 244173,6 հազար դրամ
ֆոնդային բյուջեի գծով - 76640,0 հազար դրամ
ընդհանուր - 284453,6 հազար դրամ

4. Հաստատել վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումները- 36360,0 հազ. դրամ

5. Հաստատել համայնքի 2023 թ. բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը.
վարչական բյուջեի գծով- 0 դրամ
ֆոնդային բյուջեի գծով- 40280,0 հազար դրամ
ընդհանուր - 40280,0 հազար դրամ

5. Սահմանել, որ.

1) ծախսերի ֆինանսավորումը կատարվում է փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով ծախսերի համամասնությունը,

2) բյուջեի կատարման ընթացքում համայնքի ղեկավարը «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն կարող է կատարել վերաբաշխումներ, որոնց հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել տվյալ տարվա բյուջեի 15 տոկոսը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 01-ից:

Համայնքի ավագանու անդամներ	**Կողմ**	**Դեմ**	**Ձեռնպահ**
Ներսիսյան Արայիկ Մենժիկի			
Վարդումյան Հայկ Վազգենի			
Շահնազարյան Թամարա Էդիկի			
Պապյան Հարություն Միշիկի			
Ներսեսյան Իրինա Վազգենի			
Չիբուխչյան Արման Հրաչիկի			
Սիմոնյան Անահիտ Բաբկենի			
Պապիկյան Վահրամ Ռոմիկի			
Մարգարյան Սիլվա Ստեփանի			
Վերմիշյան Կարլեն Ջիվանի			
Չատինյան Վանո Վալերի			
Գրիգորյան Աննա Հրայրի			
Չատինյան Արթուր Հրաչիկի			
Ասրյան Աննա Տիգրանի			

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.տ.

2022թ. դեկտեմբերի 23

գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 23 » դեկտեմբերի 2022թ. №42-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով՝

համայնքի ավագանին որոշում է.

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2023 թվականի փետրվարի 17-ը, ժամը՝ 12:00-ն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Ներսիսյան Արայիկ Մենժիկի			
Վարդումյան Հայկ Վազգենի			
Շահնազարյան Թամարա Էդիկի			
Պապյան Հարություն Միշիկի			
Ներսեսյան Իրինա Վազգենի			
Չիբուխչյան Արման Հրաչիկի			
Սիմոնյան Անահիտ Բաբկենի			
Պապիկյան Վահրամ Ռոմիկի			
Մարգարյան Սիլվա Ստեփանի			
Վերմիշյան Կարլեն Ջիվանի			
Չատինյան Վանո Վալերի			
Գրիգորյան Աննա Հրայրի			
Չատինյան Արթուր Հրաչիկի			
Ասրյան Աննա Տիգրանի			

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ.

2022թ. դեկտեմբերի 23

գ. Լոռի Բերդ